ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է.

1) տատանումների ուժգնությունից
2) տատանումների թափից
3) տատանումների հաճախականությունից
4) տատանումների տևողությունից

2 Մեծ սեքստան կազմված է

1) 7 աստիճանից և 5.5 տոնից
2) 6 աստիճանից և 5 տոնից
3) 6 աստիճանից և 4.5 տոնից
4) 7 աստիճանից և 6 տոնից

3 Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
2) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
3) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
4) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից

4 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
2) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
3) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
4) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով

5 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

6 D_2 -ը կառուցվում է

1) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
2) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
3) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
4) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3

7 VII_3^4- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) մ.2 + փ.3 + փքց.2
2) փ.3 + մ.2 + փ.3
3) փ.3 + մծց.2 + փ.3
4) մծց.2 + փ.3 + փ.3

8 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
3) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
4) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2

9 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) տոնայնություն
2) հնչյունաշար
3) գամմա
4) արպեջիո

10 Համանուն տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

11 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) $6^-, 7^-$ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
2) 6^+ աստիճանը
3) 7^+ աստիճանը
4) $6^-, 7^-$ աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս

12 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Միքսոլիդիական, Փռյուգիական, Հարմոնիկ
2) Իոնական, Անհեմիտոն, Դորիական
3) Լիդիական, Միքսոլիդիական, Լոկրիական
4) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական

13 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) ռիթմ
2) մետր
3) չափ
4) տակտ

14 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
2) սեքստոլը, կվինտոլը, տրելը
3) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
4) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը

15 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) տակտերի քանակն է
2) հնչյունների քանակն է
3) պարզ չափերի քանակն է
4) նոտաների քանակն է

16 $\frac{3}{8}$ նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) մեցցո-սոպրանոյի բանալի
2) սոպրանոյի բանալի
3) ալտի բանալի
4) տենորի բանալի

17 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրել
2) տրիոլ
3) տրեմոլո
4) տրիո

18 Հետևյալ տերմինները՝ **Commodo**, **Prestissimo**, **Agitato**, **Amabile**, **Doloroso** նշանակում են (ըստ հերթականության)

1) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
2) հարմարավետ, ծայրահեղ արագ, հուզված, հաճելի, թախծալի
3) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
4) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր

19 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) լայն և խառը
2) խիտ, լայն և խառը
3) խիտ և լայն
4) խիտ և խառը

20 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) կանոն
2) կոնտրապունկտ
3) իմիտացիա
4) ֆուգա

21 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն և ազատ
2) հնագույն, խիստ և ազատ
3) հնագույն, խիստ և խառը
4) հնագույն, խառը և ազատ

22 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման

1) ABCBA
2) ABACA
3) ABCAB
4) $ABACAB^1A$

23 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Բարսեղ Կանաչյան
2) Ռոմանոս Մելիքյան
3) Կոմիտաս
4) Տիգրան Չուխաջյան

24 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Առնո Բաբաջանյան
2) Գրիգոր Եղիազարյան
3) Ալեքսանդր Հարությունյան
4) Արամ Խաչատրյան

25 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հայկական «Հնգյակի» անդամ.

1) Երվանդ Երկանյան
2) Գրիգոր Եղիազարյան
3) Ղազարոս Սարյան
4) Տիգրան Մանսուրյան

26 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» Ժանրը

1) Ֆելիքս Մենդելսոն
2) Յոհաննես Բրամս
3) Ֆերենց Լիստ
4) Ֆրանց Շուբերտ

27 Ո՞ր դպրոցի ներկայացուցիչն է ջութակահար, կոմպոզիտոր Յան Ստամիցը.

1) Չեխական դպրոց
2) Դարմշտադյան դպրոց
3) Մանհայմյան դպրոց
4) Վիեննական դասական դպրոց

28 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Էդվարդ Միրզոյան
2) Անուշավան Տեր-Ղևոնդյան
3) Ղազարոս Սարյան
4) Տիգրան Մանսուրյան

29 Կլաուդիո Աբադո, Եվգենի Մրավինսկի, Անտոն Գակկել, Դավիթ Խանջյան՝ հանրաճանաչ

1) թավջութակահարներ են
2) կոմպոզիտորներ են
3) դիրիժորներ են
4) ջութակահարներ են

30 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) պոլիֆոնիկ
2) պուանտիլիստական
3) մոդալ
4) դոդեկաֆոն

31 Ի. Ս. Բախի Բրանդենբուրգյան կոնցերտներից ո՞րն է քառամաս, և հետագայում այն անվանվել է «Սիմֆոնիա».

1) թիվ 3
2) թիվ 1
3) թիվ 6
4) թիվ 4

32 Ո՞ր ժանրում չի գրել կոմպոզիտոր և վիտուոզ ջութակահար Արկանջելո Կորելլին (XVII դար).

1) տրիո-սոնատներ
2) կոնչերտո գրոսսո
3) լարային քառյակ
4) եկեղեցական սոնատներ

33 Ո՞վ է հեղինակել «Աղեղի արվեստը» 50 վարիացիայից բաղկացած շարքը.

1) Դոմենիկո Սկարլատտի
2) Արկանջելո Կորելլի
3) Անտոնիո Վիվալդի
4) Ջուզեպպե Տարտինի

34 Ո՞վ է մի մինոր ջութակի կոնցերտի հեղինակը.



1) Ալեքսանդր Գլազունով
2) Ֆելիքս Մենդելսոն
3) Յան Սիբելիուս
4) Նիկոլայ Մյասկովսկի

35 Երգեհոնը

1) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
2) ստեղնաշարային- լարային գործիք է
3) ստեղնաշարային գործիք է
4) ստեղնաշարային-փողային գործիք է

36 Ջովաննի Պալեստրինա, Օրլանդո դի Լասսո, Ժոսկեն Դեպրե՝

1) փիլիսոփաներ են
2) ջութակի վարպետներ են
3) կատարողներ են
4) կոմպոզիտորներ են

37 Ու՞մ գրչին է պատկանում «Գերմանական Ռեքվիեմը»

1) Տիգրան Մանսուրյան
2) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
3) Յոհաննես Բրամս
4) Ալֆրեդ Շնիտկե

38 Դմիտրի Շոստակովիչի ո՞ր սիմֆոնիան է բաղկացած 11 մասից.

1) թիվ 14
2) թիվ 5
3) թիվ 13
4) թիվ 10

39 Ո՞վ է «Նվիրում Պագանինիին» մենակատար ջութակի համար ստեղծագործության հեղինակը.

1) Կառլ Օրֆ
2) Յանիս Քսենակիս
3) Պաուլ Հինդեմիթ
4) Ալֆրեդ Շնիտկե

40 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական ռապսոդիաների» հեղինակը.

1) Ռոբերտ Շուման
2) Ֆելիքս Մենդելսոն
3) Ֆերենց Լիստ
4) Յոհաննես Բրամս

41 Ի՞նչ գամմաներ է հարկավոր անցնել I դասարանում

1) խրոմատիկ
2) 3 օկտավ
3) 1 օկտավ
4) 2 օկտավ

42 Քանի՞ էտյուդ է պետք անցնել I դասարանում

1) 8-10
2) 2-4
3) 5-7
4) 10-12

43 Ո՞ր դասարանից է սկսվում զույգ նոտաների ծանոթությունը

1) III
2) IV
3) II
4) I

44 Ի՞նչ շտրիխներ են անցնում III դասարանում

1) Դետաշե, լեգատո, մարտլե
2) Դետաշե, ստակատո, մարտլե
3) Ստակատո, մարտլե, Վիոտի
4) Դետաշե, սոտիյե, սպիկատո

45 Ո՞ր հեղինակի էտյուդների կամ Կապրիսների գիրքը ներառված չէ ուսումնական ծրագրում

1) Ժակ Ֆերեոլ Մազաս
2) Նիկոլո Պագանինի
3) Յակոբ Դոնտ
4) Ռուդոլֆ Կրեյցեր

46 Նշված շտրիխներից ո՞րն է կատարվում նստած, լայն աղեղով

1) Սոտիյե
2) Ստակատո
3) Սպիկատո
4) Դետաշե

47 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում Բարոկո դարաշրջանին

1) Յոհան Սեբաստիան Բախ
2) Անտոնիո Վիվալդի
3) Լյուդվիգ վան Բեթհովեն
4) Գեորգ Ֆրիդրիխ Հենդել

48 Ո՞վ է եղել հանրահայտ ջութակահար Յաշա Հայֆեցի ազգությամբ հայ առաջին ուսուցիչը

1) Հայկ Կյուտենյան
2) Դավիթ Դավթյան
3) Հովհաննես Ղալամյան
4) Հովհաննես Նալբանդյան

49 Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ջութակի կոնցերտների մասերը սովորաբար հաջորդում են հետևյալ սկզբունքով.

1) Դանդաղ, դանդաղ, արագ
2) Դանդաղ, արագ, դանդաղ
3) Արագ, դանդաղ, արագ
4) Արագ, արագ, դանդաղ

50 Քանի՞ մասից է բաղկացած Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակներ» կոնցերտային ցիկլը

1) 18
2) 4
3) 10
4) 12

51 Ի՞նչ հաջորդականությամբ են գրված Յոհան Սեբաստիան Բախի մենանվագ Սոնատները

1) Դանդաղ, դանդաղ, արագ, արագ
2) Արագ, դանդաղ, արագ, դանդաղ
3) Դանդաղ, արագ, դանդաղ, արագ
4) Արագ, արագ, դանդաղ, դանդաղ

52 Ո՞ր դասարանից են աշակերտին փոխադրում ջութակից ալտի

1) VII
2) II
3) IV
4) V

53 Ու՞մ է նվիրված Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը

1) Դավիդ Օյստրախ
2) Լեոնիդ Կոգան
3) Վիկտոր Պիկայզեն
4) Յուլիան Սիտկովեցկի

54 17-18-րդ դարերի ո՞ր կոմպոզիտորի գրչին է պատկանում հանրահայտ «Դիվային դայլայլներ» սոնատը

1) Պիետրո Լոկատելի
2) Արկանջելո Կորելլի
3) Ֆրանչեսկո Ջեմինիանի
4) Ջուզեպե Տարտինի

55 Ու՞մ գրչին է պատկանում «24 կապրիս» op.1

1) Նիկոլո Պագանինի
2) Պիեռ Ռոդե
3) Յակոբ Դոնտ
4) Հենրիկ Վենյավսկի

56 Ո՞ր հայ թավջութակահարն է արժանացել Պյոտր Չայկովսկու անվան միջազգային մրցույթի I մրցանակի

1) Արամ Թալալյան
2) Գերոնտի Թալալյան
3) Մեդեա Աբրահամյան
4) Նարեկ Հախնազարյան

57 Նշեք հայ ջութակահարի, ով 33 ժամ անընդմեջ նվագելով, գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում

1) Նիկոլայ Մադոյան
2) Էդուարդ Թադևոսյան
3) Ռուբեն Ահարոնյան
4) Հրաչյա Հարությունյան

58 Հայ կոմպոզիտորներից ո՞վ է օգտագործել իր Ջութակի և դաշնամուրի համար գրված պիեսը Ջութակի և նվագախմբի համար կոնցերտի III մասում

1) Էդուարդ Հայրապետյան
2) Էդվարդ Միրզոյան
3) Ղազարոս Սարյան
4) Ալեքսանդր Հարությունյան

59 Թավջութակի և նվագախմբի համար քանի՞ կոնցերտ է պատկանում Յոզեֆ Հայդնի գրչին

1) 4
2) 3
3) 2
4) 5

60 Ինչպե՞ս է կոչվում Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի Կոնցերտը ջութակի, ալտի և նվագախմբի համար

1) Երկխոսություն
2) Գրանդ Դուո
3) Դուո Կոնցերտ
4) Սիմֆոնիա - Կոնչերտանտե